ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՅԼ ՊՈԼԻԳՐԱՖԻԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՏՊԱԳՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/12-1

ք. Երևան

«25» մարտի 2021թ.

Արտակարգ իրավիճակների նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Վ.Օհանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և «Յասոն» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Տ. Խուրշուդյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Կատարող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 282896 (երկու հարյուր ութսուներկու հազար ութ հարյուր իննսունվեց) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Արտակարգ իրավիճակների նախարարություն	<<Յասոն>> ՍՊԸ
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8	Կոտայքի մարզ, գ. Ձորաղբյուր, Սևանի 4
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Բանկ՝ «Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 900011001352	Հ/Հ 1510002226470100
ՀՎՀՀ 00153247	ՀՎՀՀ 02540338
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝ Տ. Խուրշուդյան
_____Վ. Օհանյան	_____
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ. Տ.

Հավելված N 1
«25» 02. 2021թ. կնքված
ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/12-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
						մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	Հասցեն	Ժամկետը**
1	79821200/623	Տես Հավելված 1.1	դրամ	17760	1	ՀՀ, ք. Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղ. Ա. Միկոյան 109/8	Ֆինանսական միջոց նախատեսվելու պայմանով պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 2-րդ եռամսյակ
2	79821200/624	Տես Հավելված 1.1	դրամ	17400	1		
3	79821200/625	Տես Հավելված 1.1	դրամ	30000	1		
4	79821200/626	Տես Հավելված 1.1	դրամ	15200	1		
5	79821200/627	Տես Հավելված 1.1	դրամ	4000	1		
6	79821200/628	Տես Հավելված 1.1	դրամ	2400	1		
7	79821200/629	Տես Հավելված 1.1	դրամ	2400	1		
8	79821200/630	Տես Հավելված 1.1	դրամ	5000	1		
10	79821200/632	Տես Հավելված 1.1	դրամ	5520	1		
13	79821200/635	Տես Հավելված 1.1	դրամ	4980	1		
14	79821200/636	Տես Հավելված 1.1	դրամ	4980	1		
15	79821200/637	Տես Հավելված 1.1	դրամ	4980	1		
16	79821200/638	Տես Հավելված 1.1	դրամ	4000	1		
18	79821200/640	Տես Հավելված 1.1	դրամ	2500	1		
19	79821200/641	Տես Հավելված 1.1	դրամ	2800	1		
22	79821200/644	Տես Հավելված 1.1	դրամ	7500	1		
23	79821200/645	Տես Հավելված 1.1	դրամ	50280	1		
24	79821200/646	Տես Հավելված 1.1	դրամ	34848	1		
25	79821200/647	Տես Հավելված 1.1	դրամ	34848	1		
26	79821200/648	Տես Հավելված 1.1	դրամ	31500	1		

** ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011001352
ՀՎՀՀ 00153247
Գլխավոր քարտուղար՝

_____Վ. Օհանյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<<Յասոն>> ՍՊԸ
Կոտայքի մարզ, գ. Ձորաղբյուր, Սևանի 4
Բանկ՝ «Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510002226470100
ՀՎՀՀ 02540338
Տնօրեն՝ Տ. Խուրշուդյան

_____
(ստորագրությունը)
Կ.Տ.

Հավելված N 1.1
«25» 02. 2021թ. կնքված
ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/12-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ԿԱՊԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Տեխնիկական բնութագիրը /հատկանիշները/	Քանակը	Չափման միավորը
1	Տրանսպորտային միջոցների տեղեկամատյան	30 թերթից, չափսը՝ 14,5x20,0 սմ ծալված վիճակում, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60 գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, հայերեն, կազմված՝ տարբեր էջերից, կազմը՝ տպագրված 1 մ2 մակերեսի 300 գ զանգվածով քրոմէրզաց ստվարաթղթից, շապիկին տպագրություն, կպցված բլոկի կոնակին մեջկար եղանակով՝ 2 մետաղակապով, մետաղի ծայրերը ծալված մամուլի մեջտեղում, էջերի հանդիպակաց տողերի ուղղաձիգ համընկնում:	100	հատ
2	Հրշեջ փրկարարական ավտոմոբիլների տեխսպասարկումների մատյան	50 թերթից, չափսը՝ 21,0x29,7 սմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60 գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, կազմված՝ առաջին էջի շարունակական կրկնությունից, հայերեն, կազմը՝ տպագրված 1 մ2 մակերեսի 300 գ զանգվածով քրոմէրզաց ստվարաթղթից, կպցված բլոկի կոնակին սոսնձման եղանակով՝ ջերմասոսնձով, ամեն կողմից կողմերի 5 մմ սոսնձումը, շապիկին տպագրություն, կոնակը՝ գործվածքով, 1,5-2 սմ լայնությամբ, էջերի հանդիպակաց տողերի հորիզոնական համընկնում:	50	հատ
3	Դասամատյաններ	30 թերթից, չափսը՝ 21,0x29,7 սմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60 գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, կազմված՝ առաջին և վերջին դատարկ էջերից, երկրորդ և երրորդ էջերի շարունակական կրկնությունից, հայերեն, կազմը՝ երկու 19,5x29,7 մասից՝ ձախակողմյան ծալվածքով և ներսում անձնակազմի հաշվառման համար նախատեսված աղյուսակ, տպագրված 1 մ2 մակերեսի 300 գ զանգվածով քրոմէրզաց ստվարաթղթից, շապիկին տպագրություն, կպցված բլոկի կոնակին մեջկար եղանակով՝ 3 մետաղակապով, մետաղի ծայրերը ծալված մամուլի մեջտեղում, էջերի հանդիպակաց տողերի ուղղաձիգ համընկնում:	100	հատ
4	Հրշեջ փրկարարական ջոկատի ռադիոկապի վիճակի ստուգման մատյան	50 թերթից, չափսը՝ 21,0x29,7 սմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60 գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, կազմված՝ առաջին էջի շարունակական կրկնությունից, հայերեն, կազմը՝ տպագրված 1 մ2 մակերեսի 300 գ զանգվածով քրոմէրզաց ստվարաթղթից, շապիկին տպագրություն, կպցված բլոկի կոնակին մեջկար եղանակով՝ 3 մետաղակապով, մետաղի ծայրերը ծալված մամուլի մեջտեղում, էջերի հանդիպակաց տողերի ուղղաձիգ համընկնում:	40	հատ
5	Հրշեջ փրկարարական ջոկատի ծառայության մատյան/օբյեկտային	100 թերթից, չափսը՝ 21,0x29,7 սմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60 գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, կազմված՝ առաջին և վերջին դատարկ էջերից, երկրորդ և երրորդ էջերի բովանդակությունից, չորրորդ և հինգերորդ էջերի շարունակական կրկնությունից, հայերեն, կազմը՝ տպագրված 1 մ2 մակերեսի 300 գ զանգվածով քրոմէրզաց ստվարաթղթից, կպցված բլոկի կոնակին սոսնձման եղանակով՝ ջերմասոսնձով, ամեն կողմից կողմերի 5 մմ սոսնձումը, շապիկին տպագրություն, կոնակը՝ գործվածքով, 1,5-2 սմ լայնությամբ, էջերի հանդիպակաց տողերի ուղղաձիգ համընկնում:	5	հատ

6	ՀՀ ԱԻՆ ՓԾ ՓՈՒՎ ՀՆՓԱԻԿ կանչերի գրանցման մատյան	100 թերթից, չափսը՝ 21,0x29,7 սմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60 գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, կազմված՝ առաջին և վերջին դատարկ էջերից, երկրորդ և երրորդ էջերի շարունակական կրկնությունից, հայերեն, կազմը՝ տպագրված 1 մ2 մակերեսի 300 գ զանգվածով քրոմէրզաց ստվարաթղթից, կպցված բլոկի կոնակին սոսնձման եղանակով՝ ջերմասոսնձով, ամեն կողմից կողմերի 5 մմ սոսնձումը, շապիկին տպագրություն, կոնակը՝ գործվածքով, 1,5-2 սմ լայնությամբ, էջերի հանդիպակաց տողերի ուղղաձիգ համընկնում:	3	հատ
7	ՀՀ ԱԻՆ ՓԾ ՓՈՒՎ ՀՆՓԱԻԿ ծառայության վերակարգի մատյան	100 թերթից, չափսը՝ 21,0x29,7 սմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60 գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, կազմված՝ առաջին և վերջին դատարկ էջերից, երկրորդ և երրորդ էջերի շարունակական կրկնությունից, հայերեն, կազմը՝ տպագրված 1 մ2 մակերեսի 300 գ զանգվածով քրոմէրզաց ստվարաթղթից, կպցված բլոկի կոնակին սոսնձման եղանակով՝ ջերմասոսնձով, ամեն կողմից կողմերի 5 մմ սոսնձումը, շապիկին տպագրություն, կոնակը՝ գործվածքով, 1,5-2 սմ լայնությամբ, էջերի հանդիպակաց տողերի ուղղաձիգ համընկնում: .	3	հատ
8	Կադրերի հաշվառման անձնական թերթիկ/ԿՎ/	A3 ֆորմատի տպագրական թուղթ բացված վիճակում, ծալված վիճակում համապատասխանում է A4 ֆորմատի չափին և բաղկացած է 2 թերթից, չափսը՝ 21,0x29,7 սմ, 1 մ2 մակերեսի 60 գ զանգվածով, օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, հայերեն, հանդիպակաց տողերի ուղղաձիգ համընկնում:	200	հատ
10	Ծառայողական քարտ/ԿՎ/	Չափսը՝ 21,0x29,7 սմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 160 գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, հայերեն:	200	հատ
13	Այցելուների գրանցման մատյան	200 թերթից, չափսը՝ 21,0x29,7 սմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60 գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, կազմված՝ առաջին էջի շարունակական կրկնությունից, հայերեն, կազմը՝ տպագրված 1 մ2 մակերեսի 300 գ զանգվածով քրոմէրզաց ստվարաթղթից, կպցված բլոկի կոնակին սոսնձման եղանակով՝ ջերմասոսնձով, ամեն կողմից կողմերի 5 մմ սոսնձումը, շապիկին տպագրություն, կոնակը՝ գործվածքով, 1,5-2 սմ լայնությամբ, էջերի հանդիպակաց տողերի հորիզոնական համընկնում:	5	հատ
14	Տրանսպորտային միջոցների մուտքի-ելքի մատյան	200 թերթից, չափսը՝ 21,0x29,7 սմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60 գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, կազմված՝ առաջին էջի շարունակական կրկնությունից, հայերեն, կազմը՝ տպագրված 1 մ2 մակերեսի 300 գ զանգվածով քրոմէրզաց ստվարաթղթից, կպցված բլոկի կոնակին սոսնձման եղանակով՝ ջերմասոսնձով, ամեն կողմից կողմերի 5 մմ սոսնձումը, շապիկին տպագրություն, կոնակը՝ գործվածքով, 1,5-2 սմ լայնությամբ, էջերի հանդիպակաց տողերի հորիզոնական համընկնում:	5	հատ
15	Աշխատակիցների գրանցման մատյան	100 թերթից, չափսը՝ 21,0x29,7 սմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60 գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, կազմված՝ առաջին էջի շարունակական կրկնությունից, հայերեն, կազմը՝ տպագրված 1 մ2 մակերեսի 300 գ զանգվածով քրոմէրզաց ստվարաթղթից, կպցված բլոկի կոնակին սոսնձման եղանակով՝ ջերմասոսնձով, ամեն կողմից կողմերի 5 մմ սոսնձումը, շապիկին տպագրություն, կոնակը՝ գործվածքով, 1,5-2 սմ լայնությամբ, էջերի հանդիպակաց տողերի հորիզոնական համընկնում:	5	հատ

16	Հերթապահության մատյան	100 թերթից, չափսը՝ 21,0x29,7 սմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60 գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, կազմված՝ առաջին և վեջին դատարկ էջերից, երկրորդ և երրորդ էջերի շարունակական կրկնությունից, հայերեն, կազմը՝ տպագրված 1 մ2 մակերեսի 300 գ զանգվածով քրոմէրզաց ստվարաթղթից, կպցված բլոկի կռնակին սոսնձման եղանակով՝ ջերմասոսնձով, ամեն կողմից կողմերի 5 մմ սոսնձումը, շապիկին տպագրություն, կռնակը՝ գործվածքով, 1,5-2 սմ լայնությամբ, էջերի հանդիպակաց տողերի ուղղաձիգ համընկնում:	4	հատ
18	Փրկարար ծառայողների վկայականների հաշվառման մատյան/ԿՎ/	200 թերթից, չափսը՝ 21,0x29,7 սմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60 գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, կազմված՝ առաջին էջի շարունակական կրկնությունից, հայերեն, կազմակողերը՝ կազմարարական ստվարաթուղթ 1,5մմ հաստությամբ՝ պատված 1 մ2 մակերեսի 120 գ զանգվածով օֆսեթ թղթից, կազմը կպցված բլոկի կռնակին սոսնձման եղանակով՝ ջերմասոսնձով, ամեն կողմից կողմերի 5 մմ սոսնձումը, շապիկին տպագրություն, բլոկի և կազմակողի միջև ֆորզացը՝ 1 մ2 մակերեսի 120 գ զանգվածով օֆսեթ թղթով, կռնակը՝ գործվածքով, 2-2,5 սմ լայնությամբ, էջերի հանդիպակաց տողերի հորիզոնական համընկնում:	2	հատ
19	Հաստիքագիրք/ԿՎ/	80 թերթ, չափսը՝ 21,0x29.7, տպագրությունը՝ 1մ2 մակերեսի 160 գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, հայերեն, կազմված՝ առաջին և վերջին դատարկ էջերից, երկրորդ էջի շարունակական կրկնությունից, կազմակողերը՝ կազմարարական ստվարաթուղթ 1,5 մմ հաստությամբ՝ պատված 1 մ2 մակերեսի 120 գ զանգվածով օֆսեթ թղթով, շապիկին տպագրություն, բլոկը թելակար, բլոկի և կազմակողի միջև ֆորզացը՝ 1մ2 մակերեսի 120 գ զանգվածով օֆսեթ թղթով, կռնակը գործվածքով՝ 2-2,5 սմ լայնությամբ, էջերի հանդիպակաց տողերի հորիզոնական համընկնում:	2	հատ
22	Գրասենյակային գիրք	100 թերթից, չափսը՝ A4 21,0x29,7 սմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60 գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, հայերեն, կազմը՝ տպագրված 1 մ2 մակերեսի 300 գ զանգվածով քրոմէրզաց ստվարաթղթից, կպցված բլոկի կռնակին սոսնձման եղանակով՝ ջերմասոսնձով, ամեն կողմից կողմերի 5 մմ սոսնձումը, շապիկին տպագրություն:	15	հատ
23	ՀՓՋ և ՀՀՋ ծառայության մատյան	100 թերթից, չափսը՝ 21,0x29,7 սմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60 գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, կազմված՝ առաջին և վերջին դատարկ էջերից, երկրորդ և երրորդ էջերի բովանդակությունից, չորրորդ և հինգերորդ էջերի շարունական կրկնությունից, հայերեն, կազմը՝ տպագրված 1 մ2 մակերեսի 300 գ զանգվածով քրոմէրզաց ստվարաթղթից, կպցված բլոկի կռնակին սոսնձման եղանակով՝ ջերմասոսնձով, ամեն կողմից կողմերի 5 մմ սոսնձումը, շապիկին տպագրություն, կռնակը՝ գործվածքով 1,5-2 սմ լայնությամբ, էջերի հանդիպակաց տողերի ուղղաձիգ համընկնում:	100	հատ
24	*ՀՓՋ հրդեհների ելքերի գրանցման մատյան*	*100 թերթից, չափսը՝ 21,0x29,7 սմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60 գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, կազմված՝ առաջին էջի շարունակական կրկնությունից, հայերեն, կազմը՝ տպագրված 1 մ2 մակերեսի 300 գ զանգվածով քրոմէրզաց ստվարաթղթից, կպցված բլոկի կռնակին սոսնձման եղանակով՝ ջերմասոսնձով, ամեն կողմից կողմերի 5 մմ սոսնձումը, շապիկին տպագրություն, կռնակը՝ գործվածքով, 1,5-2 սմ լայնությամբ, էջերի հանդիպակաց տողերի հորիզոնական համընկնում:*	60	հատ

25	*ՀՓՁ փրկարարական և այլ ելքերի գրանցման մատյան*	*100 թերթից, չափսը՝ 21,0x29,7 սմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60 գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, կազմված՝ առաջին էջի շարունակական կրկնությունից, հայերեն, կազմը՝ տպագրված 1 մ2 մակերեսի 300 գ զանգվածով քրոմէրզաց ստվարաթղթից, կպցված բլոկի կոնակին սոսնձման եղանակով՝ ջերմասոսնձով, ամեն կողմից կողմերի 5 մմ սոսնձումը, շապիկին տպագրություն, կոնակը՝ գործվածքով, 1,5-2 սմ լայնությամբ, էջերի հանդիպակաց տողերի հորիզոնական համընկնում:*	60	հատ
26	ՀՓՁ հրդեհների հաշվառման քարտերի գրանցման մատյան	50 թերթից, չափսը՝ 21,0x29,7 սմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60 գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, կազմված՝ առաջին էջի շարունակական կրկնությունից, հայերեն, կազմը՝ տպագրված 1 մ2 մակերեսի 300 գ զանգվածով քրոմէրզաց ստվարաթղթից, շապիկին տպագրություն, կպցված բլոկի կոնակին մեջկար եղանակով՝ 3 մետաղակապով, մետաղի ծայրերը ծալված մամուլի մեջտեղում, էջերի հանդիպակաց տողերի ուղղաձիգ համընկնում:	70	հատ

*** Տպագրական աշխատանքներն իրականացվելու են պատվիրատուի ներկայացրած նմուշների հիման վրա:**
Ծառայությունների մատուցման ժամկետը՝ 2021 թ. II եռամսյակ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող. 109/8
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011001352
ՀՎՀՀ 00153247
Գլխավոր քարտուղար՝

_____Վ. Օհանյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

<<Յասոն>> ՍՊԸ
Կոտայքի մարզ, գ. Ձորաղբյուր, Սևանի 4
Բանկ՝ «Արարատբանկ» ԲԲԸ
Հ/Հ 1510002226470100
ՀՎՀՀ 02540338
Տնօրեն՝ Տ. Խուրշուդյան

_____
(ստորագրությունը)
Կ. Տ.

Հավելված N 2
«25» 02. 2021թ. կնքված
ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/12-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79821200/623	Տրանսպորտային միջոցների տեղեկամատյան	-	-	-	2664	2664	2664	5328	5328	5328	17760	17760	17760	17760
2	79821200/624	Հրշեջ փրկարարական ավտոմոբիլների տեխսպասարկում-ների մատյան	-	-	-	2610	2610	2610	5220	5220	5220	17400	17400	17400	17400
3	79821200/625	Դասամատյաններ	-	-	-	4500	4500	4500	9000	9000	9000	30000	30000	30000	30000
4	79821200/626	Հրշեջ փրկարարական ջոկատի ռադիոկապի վիճակի ստուգման մատյան	-	-	-	2280	2280	2280	4560	4560	4560	15200	15200	15200	15200
5	79821200/627	Հրշեջ փրկարարական ջոկատի ծառայության մատյան/օբյեկտային	-	-	-	600	600	600	1200	1200	1200	4000	4000	4000	4000
6	79821200/628	ՀՀ ԱԻՆ ՓԾ ՓՈՒՎ ՀՆՓԱԻԿ կանչերի գրանցման մատյան	-	-	-	360	360	360	720	720	720	2400	2400	2400	2400
7	79821200/629	ՀՀ ԱԻՆ ՓԾ ՓՈՒՎ ՀՆՓԱԻԿ ծառայության վերակարգի մատյան	-	-	-	360	360	360	720	720	720	2400	2400	2400	2400
8	79821200/630	Կադրերի հաշվառման անձնական թերթիկ/ԿՎ/	-	-	-	750	750	750	1500	1500	1500	5000	5000	5000	5000
10	79821200/632	Ծառայողական քարտ/ԿՎ/	-	-	-	828	828	828	1656	1656	1656	5520	5520	5520	5520
13	79821200/635	Այցելուների գրանցման մատյան	-	-	-	747	747	747	1494	1494	1494	4980	4980	4980	4980

14	79821200/636	Տրանսպորտային միջոցների մուտքի-ելքի մատյան	-	-	-	747	747	747	1494	1494	1494	4980	4980	4980	4980
15	79821200/637	Աշխատակիցների գրանցման մատյան	-	-	-	747	747	747	1494	1494	1494	4980	4980	4980	4980
16	79821200/638	Հերթապահության մատյան	-	-	-	600	600	600	1200	1200	1200	4000	4000	4000	4000
18	79821200/640	Փրկարար ծառայողների վկայականների հաշվառման մատյան/ԿՎ/	-	-	-	375	375	375	750	750	750	2500	2500	2500	2500
19	79821200/641	Հաստիքացուցակ /ԿՎ/	-	-	-	420	420	420	840	840	840	2800	2800	2800	2800
22	79821200/644	Դրասենյակային գիրք	-	-	-	1125	1125	1125	2250	2250	2250	7500	7500	7500	7500
23	79821200/645	ՀՓԶ և ՀՀԶ ծառայության մատյան	-	-	-	7542	7542	7542	15084	15084	15084	50280	50280	50280	50280
24	79821200/646	ՀՓԶ հրդեհների ելքերի գրանցման մատյան	-	-	-	5227	5227	5227	10454	10454	10454	34848	34848	34848	34848
25	79821200/647	ՀՓԶ փրկարարական և այլ ելքերի գրանցման մատյան	-	-	-	5227	5227	5227	10454	10454	10454	34848	34848	34848	34848
26	79821200/648	ՀՓԶ հրդեհների հաշվառման քարտերի գրանցման մատյան	-	-	-	4725	4725	4725	9450	9450	9450	31500	31500	31500	31500
Ընդամենը ըստ եռամսյակների՝			**-**			**42 434**			**84 869**			**282 896**			**282 896**

* Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

/ստորագրություն/

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

/ստորագրություն/

Կ.Տ

Հավելված 3
«25» 02. 2021թ. կնքված
ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/12-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«25» 02. 2021թ. կնքված
ԳՀԾՁԲ-ԱԻՆ-21/12-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն